ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.010599600, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43, 0010, Ереван,
В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

№ _____ 20 05 2022թ.

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱԹԱՆ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ի դեմս նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի) և բարերարը (ի դեմս քաղաքացի Վարդան Քալանթարյանի)՝ (այսուհետ՝ Կողմեր).

կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով օժանդակելու պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, օգտագործմանը և Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի իրականացմանը,

անհրաժեշտ համարելով միավորել Կողմերի հնարավորությունները և համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի Չորաթան գյուղի «**Սուրբ Հռիփսիմե եկեղեցի» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման** նպատակով:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի Չորաթան գյուղի **«Սուրբ Հռիփսիմե եկեղեցի» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման** ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝

1) սահմանված կարգով կքննարկի հուշարձանի գիտանախագծային փաստաթղթերը նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդում և կտրամադրի եզրակացություն,

2) կհամաձայնեցնի ներկայացված աշխատանքային նախագծերը,

3) կտրամադրի հուշարձանի վերականգնողական աշխատանքների իրականացման համար թույլտվություն,

4) աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական ու իրավական խորհրդատվություն և աջակցություն:

2. Բարերարը՝

1) իր միջոցներով կիրականացնի հուշարձանի ուսումնասիրություն և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, որոնք կներկայացնի ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնեցմանը,

2) նախարարությանը կտրամադրի հեղինակային, տեխնիկական հսկողությունների և կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերը՝ վերականգնման թույլտվություն ստանալու նպատակով,

3) կցուցաբերի աջակցություն նաև այլ հարցերում՝ իր իրավասությունների շրջանակներում:

1. Կողմերը պարտավորվում են պատշաճ կերպով կատարել Հուշագրով ամրագրված պարտավորությունները: Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու օրվանից 10 (տաս) օր հետո՝ հուշագրի պայմանները խախտելու դեպքում:

2. Սույն Հուշագրով չկարգավորվող բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Կողմերը պարտավորվում են լրատվական միջոցներով լուսաբանել և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:

4. Սույն Հուշագիրը բաղկացած է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն՝ 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին հատկացվում է սույն Հուշագրի 1 (մեկ) օրինակը:

5. Սույն Հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

6. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն համագործակցության հուշագիրը ստորագրեցին.

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝
նախարարի տեղակալ՝
ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ

ստորագրություն

ԲԱՐԵՐԱՐ՝
ՎԱՐԴԱՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ստորագրություն